

Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2022-2023 ուս. տարի
11-12 – րդ դասարան

1. ա-սիալ; բ-սիալ; գ-սիալ; դ-սիալ (յուրաքանչյուրը՝ 0.25միավոր)

2. ա-սիալ; բ-սիալ; գ-ճիշտ; դ-ճիշտ (յուրաքանչյուրը՝ 0.25միավոր)

3. **ա.** Ճանապարհի տվյալ հատվածով անցնող բեռների ընդհանուր զանգվածը կամ շահագործվող ճանապարհի 1կմ հատվածին բաժին ընկնող բեռների զանգված (որ տարբերակն էլ աշակերտը գրի՝ **0.5միավոր**):

բ. քամու կողմից կատարվող աշխատանքը կամ քամու հողմահարումը և էրոզիան (**0.5միավոր**):

4. սնոգ կամ թունամշուշ

5. **ա.** մեանդր **բ.** լատերիտ

6. **ա.** Ա կետի ժամային գոտու կենտրոնական միջօրեականը՝ $(52.5+67.5)/2 =$ արլ.ե. 60° . հետևաբար՝

1) $60^\circ - 56^\circ = 4^\circ$

2) $4^\circ \times 4$ րոպե = 16րոպե (տարբերությունը գոտիական ժամանակից)

3) $16:00 - 16$ րոպե = $15:44$ (Ա կետի տեղական ժամանակը) (**0.5միավոր**)

4) $56^\circ - 16^\circ = 40^\circ$ (Ա և Բ կետերի միջօրեականների հեռավորությունը)

5) 40×4 րոպե = 160րոպե (2ժամ 40րոպե)

6) $15:44 - 16$ րոպե = $13:04$ (**0.5միավոր**)

Եթե աշակերտը յուրաքանչյուր կետի տեղական ժամանակի որոշման գործողությունների առնվազն կեսն արել է, յուրաքանչյուր կետի համար շնորհել **0.25միավոր**: Եթե հաշվարկների վերջին քայլում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **նշանակել 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է ստացել՝ **1միավոր**:

բ. 1:6000 մասշտաբը նշանակում է, որ 1սմ- 60մ է: Հետևաբար՝

1) $60\text{մ} \times 20 = 1200\text{մ}$ (Ա-Բ կետերի իրական հեռավորությունը)

2) $1800\text{մ} - 1200\text{մ} = 600\text{մ}$

3) $600\text{մ}/1200\text{մ} = 0.5$

Աշակերտը կարող է նաև թեքությունը արտահայտել %-ով, ինչի համար $0.5 \cdot 100 = 50\%$: Նման դեպքում պատասխանը ևս համարել լիարժեք ճիշտ: Եթե գործողություններում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **նշանակել 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է ստացել՝ **1միավոր**:

7. **ա.** Խաղողագործություն, պտղաբուծություն, հարավային (ջերմասեր) բանջարաբուծություն, ծխախոտագործություն (**յուր. 0.25 միավոր**)

բ. ԱՄՆ, ՌԴ, Եթովպիա, Տիվայիներ (**յուր. 0.25 միավոր**)

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել 0.25միավորով:

8. **ա.** Լատինական Ամերիկա, Հյուսիսային Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա

բ. Սան Մարինո, ԱՄՆ, Բրազիլիա, Արևելյան Թիմոր

Երկու դեպքում էլ իր դիրքում ճիշտ նշված պատասխանի համար աշակերտին շնորհել **0.25միավոր**

9. **ա.** Արևադարձային ցիկլոնները պտտողական շարժում կատարող մթնոլորտային զանգվածներ են և նրանց պտույտի պատճառը Կորիոլիսի ուժն է: Սակայն 0-5° միջակայքում Կորիոլիսի ուժը այնքան աննշան է, որ թույլ չի տալիս արևադարձային ցիկլոնները ձևավորվեն: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5միավոր

բ. Որպես հիմնական պատճառներ ընդունել հետևյալներից որևէ երկուսը. 1) Մեծանում է աշխարհի բնակչության եկամուտները; 2) Երկարում են մարդկանց արձակուրդները; 3) Գլոբալիզացիայի պայմաններում հեշտանում է երկրների միջև տրանսպորտային հաղորդակցությունը; 4) Թվային տեխնոլոգիաների զարգացմամբ ավելի դյուրին է դարձել տեղեկություն ստանալը; 5) Ուրբանիզացիայի

արդյունքում մեծանում է վայրի բնության հետ շփման ձգտումը: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5 միավոր:

10. ա. Իսլանդիան (0.25միավոր); երկրաջերմային (0.25միավոր)

բ. 2011թ. տեղի ունեցած երկրաշարժը և դրան հաջորդած ցունամին վնասեցին Ֆուկուշիմայի ատոմակայանը, որն այդ պահի դրությամբ ոչ միայն աշխարհում ամենահզորն էր իր տեսակում, այլև համարվում էր ամենաանվտանգը: Այս դեպքը հերթական անգամ ստիպեց մարդկությանը մտածել ատոմային էներգետիկայի հեռանկարների մասին, իսկ որոշ երկրներ առհասարակ որոշեցին հրաժարվել էներգետիկայի այս տեսակից: Ճապոնիան ևս ստիպված էր ժամանակավորապես դադարեցնել մի շարք ատոմակայանների գործունեությունը և էներգետիկ պահանջները բավարարելու համար ավելացրեց ջերմային էներգետիկայի բաժինը **(0.5միավոր)**: Իմաստային ճիշտ մեկնաբանության համար շնորհել 0.5միավոր, սակայն եթե երկրաշարժն ու ցունամին չի նշվում՝ առավելագույնը՝ 0.25միավոր:

գ. Եվրոպայում էներգետիկ անվտանգության ամենամեծ խնդիրը շարունակում է մնալ կախվածությունը էներգակիրների միջազգային շուկայից և մասնավորապես ռուսական էներգառեսուրսներից **(0.5 միավոր)**: Լուծման հիմնական ուղիներից են. 1) անցումը այլընտրանքային էներգետիկայի այնպիսի ուղղությունների, ինչպիսին են արևային, հողմային, երկրաջերմային, մակընթացային և այլ տեսակները; 2) կարճաժամկետ հեռանկարում վառելիքի այլ մատակարարներ գտնելը: Այլ, իմաստային ճիշտ, սակայն քիչ արդյունավետ լուծումների դեպքում շնորհել 0.25միավոր

11. ա. Հյուսիսսահայաց: Քանի որ Պատագոնիայի սարահարթը գտնվում է հարավային արևադարձից հարավ, արևը մշտապես նրանից հյուսիս է: Հաշվի առնելով, որ խաղողը պահանջկոտ է ջերմության և արևի նկատմամբ՝ այն Պատագոնիայի սարահարթում նպատակահարմար է տեղաբաշխել հյուսիսսահայաց լանջերին:

բ. Դեպի նավահանգստային գոտիներ **(0.5միավոր)**: Չնայած Ճապոնիան չունի սեփական ածխի և երկաթաքարի նշանակալի ռեսուրսներ, սակայն պողպատի արտադրությամբ առաջատար երկրներից մեկն է աշխարհում և իր արտադրությունը ամբողջովին հիմնվում է ներկրվող հումքի վրա: Հումքը ներկրվում է ծովային տրանսպորտով, ինչի պատճառով ավելի էժան է և պողպատաձուլական ձեռնարկություններն էլ ձգտում են նավահանգստային գոտիներ՝ տրանսպորտային ծախսերը նվազեցնելու համար **(0.5միավոր)**:

12. 1-Գ; 2-Ա; 3-Բ; 4-Դ (յուր. 0.5միավոր)